ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի № 428-Ա

ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ի № 472-Ա որոշումը և *Մարիամ Առաքելյանի*՝ 2024 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ջրվեժի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Մարիամ Առաքելյանին*** տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2024 թվականի նոյեմբերի 4-ից 29-ը ներառյալ:

2. ***Մարիամ Առաքելյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ջրվեժի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բժիշկ ***Նելլի Առաքելյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հոկտեմբերի 30
ք. Հրազդան